197

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—o—
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար եւ չեն վերադարձուիր։
—
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

ՀԱՅՆ Հայրենեաց

ՀԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
AN ARMENIAN WEEKLY.
ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co.
209 E. 23d St., New York City.
Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.
Subscription $1.50 a Year.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յայտարարութիւն Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան — Յայտարարութիւններ։— Հայրենեաց Ձայնը։—Դէպի Փրկութիւն։— Մ. Մամուրեանի յուղեւեանը։— Հայաստանի տնտեսական վերականգնման միջոցը (նամակ Վանէն)։—Նամակ Աւստրիայէն։—Նամակ խմբագրութեան։— Աղգային քննիկ։— Ախպարանց արուն, (ոտանաւոր)։—Քաղաքական։—Ներքին լուրեր։— Բանասիրական (Ուր կ'երթանք)։

Յայտարարութիւն

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

«ՏԻԳՐԻՍ»ի վերջի երկու թուերով որոշապէս յայտարարուեցաւ Ամերիկայի Հայ Հրատարակչական ընկերութեան կազմակերպութեան լուրը, ահա սոյն կազմակերպութիւնը՝ «Ձայն Հայրենեաց»ի առաջնորդող պատասխ իւր գոյութիւնը մասնաւորապէս Ամերիկայի մէջ գտնուող հայրենեաց զաւակներուն։

Քանի որ մատիւր ենք ամբողջ ծրագիրը վերջէն հրատարակել իւր մանրամասնութեամբ առանձին տետրակով մը, այժմ կը բաւականանանք միայն Նպատակն և Միջոցները հրատարակելով։

ՆՊԱՏԱԿ

Ամերիկայի Հայ Հրատարակչական ընկերութեան նպատակն է մամուլի միջոցաւ Հայ գաղութիս մասաւոր զարգացմանը նպաստել, և ջանալ զերծ պահել զայն անբարոյականացուցիչ և ազգութենէ օտարացուցիչ ամեն ազդեցութենէ։ Հետեւաբար ընկերութեանս ուղղութիւնը պիտի բլլայ ջատագով կենալ Քրիստոնէական կրօնի և բարոյականութեան, Հայ ազգի և հայրենեաց սիրոյ արծարծման հայրենեաց փրկութեան գաղափարի ուսումնասիրութեան, ընտանեկան և ընկերական կեանքի ազնուացման, և այն ամեն չինիչ և լուսամիտ գաղափարաց տարածման, որք կը բարձրացնեն Հայ գաղթականութեանս դիրքը քաղաքակիրթ աշխարհի մակարդակին, և կը կապեն զմեզ հայրենիքի հետ։

ՄԻՋՈՑ

Ընկերութիւնս իւր նպատակի իրագործման համար պիտի հրատարակէ գիրքեր ու տետրակներ, հեղինակութիւն կամ թարգմանութիւն, նաև մի շաբաթերթ իւր ուղղութեան իբր օրկան, և որովհետեւ այսօր Ամերիկայի մէջ հրատարակեալ «Տիգրիս» շաբաթերթի ուղղութիւնը կը համապատասխանէր ընկերութեանս ծրագրին, ուստի ընկերութիւնս համաձայութիւն գոյացնելով անոր խմբագրութեան հետ, որ թերթի անունը «Ձայն Հայրենեաց» կոչելով ընկերութեանս հրատարակելի թերթը ըլլայ։

***

Ահա՛, ընկերութեանս նպատակը՝ բարձրացնել, պատրաստել Հայ ժողովուրդը։ Մենք այս նուիրական նպատակի առջև իբրև կամաւոր զինուորներ զոհուելու պատրաստ ենք, սակայն այս մեր անձնուիրութեան հետ մէկտեղ օգտակար քաջութիւն մը ունինք, որ կուզենք կանխաւ խոստովանիլ թէ՝ մենք այս երկար և խորտուբորտ ճամբէն դժուարութեամբ պիտի կրնանք նպատակին հասնիլ, եթէ մեր շուրջ գտնուող ազնիւ ազգասէրներն իրենց մտքով, սրտով, և դրամով չօժանդակին մեզ։

Կուզենք օգտակար ըլլալ, կըզգանք թէ տարբեր տարբեր տարրերու է որ կուզենք բան մը հասկցնել, հոգիներու սրտերու և մտքերու հետ է որ գործ պիտի ունենանք։

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ» ունենալով իր որոշ ուղղութիւնը ու գաղափարի կուսակցութիւնը, որ և է ծանօթ կուսակցութեան չի պատկանիր, հետեւաբար իր էջերը միշտ բաց պիտի թողու օգտակար գրչներով չը ներկենք կեղեւը, չ'խարեանք ինքզինքնիս, տխրերանգ երեւոյթներով լի է Հայու ներկան։

Տեղ տեղ ովսանաների նման կը ծլին ու կը ծաղկին նպատակայարմար երեւոյթներ, սակայն մէկ ծաղիկով գարունը պըճնազարդ չի՛ լինիր, ո՛չ ալ մէկ ասաղիկով երկնակամարը կը կայծկլտայ։

Պահ մը ուշի ուշով դէպի Հայրենիք դարձնենք աչուքներս ու ինչ կը տեսնենք, ինչ աղեկէզ տեսարաններ կը պարզուին մեր առաջ։

Երէկուան անխնայ կոտորածներին, այսօրուան բնականաբար յաջորդող սարսափելի սովը Եւրոպական դիպլոմատիայէն ա՛լ աւելի անսիրտ ու անողոք, ա՛լ աւելի անխիղճ ու անողորմ կերպով, օրէ օր, վայրկենէ վայրկեան Հայ մարդկանց սովամահ եղած դիակների շար ի շար կոյտեր կը դիզէ իրար վրայ։ Դաւանափոխութեան կամ աւելի ճիշդը, դաւանավաճառութեան բարոյապէս մահացուցնող հոսանքը վերջին հարուածը կը գայ տալու ուժասպառ ու արիւնաքամ եղած Հայուն։

Լոյսերայի գառնազգեստ աշակերտները, իրենց դարաններէն ալ դուրս եկած, հերիք չէր այլամուղջի մէջ ըրածնին, այլ եւ օր ցերեկով արեւի լոյսին տակ պատառ պատառ կուզեն ընել վիրաւոր առիւծին....։

«Զոհը ինկածէ, կիջնեն ագռաւներ....»։

Նոյնպէս երէկուան հրդեհուած, մոխիր ու աւերակ դարձած Հայ շէներէն բարձրացող քուլա, քուլա, սեւաթոյր, ամպանման ծուխերն, յոշ յոշ, բզիկ բզիկ պատառուած արիւնաներկ հայ մարդու վերջին աղեխորով հառաչանքներն, լիճ ու ծով, գետ ու առու կազմած Հայ արեան գոլորշիներն, բռնաբարուած Հայ օրիորդի սրտաճմլիկ հեծկլտանքներն, իրենց տան փլատակների ներքև ճզմուած ու փշրուած, մեծ կտոր ականջները մնացած Հայ եղբարց վերջին «ա՛խ..»ներն, կապուած պինդ ու պիրկ կաշկանդուած, «Վառուան գեհեն» թոնիրների բոցերուն մէջ այրուած «խուրտուխաշ»խանձուած, ափ մը մոխիր, որդուջ չար ոսկոր եղած Հայ մայրերի աղէխարշ անքոցներն, Հայ մ..նկան՝ ըսիլիզող էրող ողորող բոցերուն մէջէն՝ ողջ ողջ կենդանի, կենդանի այրուելուն ժամանակ արձակած «հա՛յ.... բիկ.... մ ա՛յ.... բ.. ի՛կ....» նուազկոտ ձայներն, բռնաբարու խորերը, անլոյս անարև «ղնտան»ների մէջ, Հայ գաղափարական կենդանի նահատակ, երիտասարդի, հրաշէկ երկաթներով "դը՛ժ.... դը՛ժ...." տաղուած մարմնէն բուրող ճենճերային ծխախառն բուրումները, կոխաղանի բարձրութենէն կախաղանը արհամարող Հայ դիւցազնի Մեռնի՛նք ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ....բացագանչումներն ու ժպիտներն. և սար ու ձորերի դաշտ ու արտերէն մէջ Թշնամու անհամար բազմութեամբ շրջապատուած, մինչև վերջին շունչը դիմադրող և ապա իսէր Հայրենիքի բարօրութեան նահատակուող առիւծ կտրուած Հայ «ածաբհար հերոս»ի «վրէ՛ժ, վրէ՛ժ....» որոտագին աղաղակներն, այդ բոլորը, ա՛յո, այսօրուան, նոյնպէս այդ միևնոյն հայրենիքին մէջ հալածուող ու տանջուող հայ մայրերի, եղբայրների ու քոյրերի....փշ՛ուր մը հա՛ց, ի սէր Աստուծոյ.. փը՛շուր մը....փշուրիկ մը.... կաթուլիկ կը լինիմ....քո օրէնքին կը հեւանիմ.... քո դաւանանքին....ի՛նչ կը լինի....փշուրիկ մը....", ոգնանման հոգի ու սիրտ մրկող, տապկող ողբ ու կանչոցներ և հայ մանկան -"մեռ....այ մ..այ՛..ր..իկ.... չո՛..ր....այ.... ան օթի.... մեռ....ա՛յ,,-ճիչերի հետ գիրկնդխառն մխուցած մի էութիւն, մի մարմին կազ-

ՀԱՅՐԵՆՆՈՒՑ ՁԱՅՆԸ

Ի՞նչ կայ առաւել վսեմ քան աշխարհի ստեղծագործութեան պատմութեանը մէջ ձայն մը "Եղիցի, և եղև"....։

Արուեստի աշխարհին խանձարուրին քով կանգնած կայ, անոր ծնունդին ու անունդին մայր ու դայեակ ձայն մը՝ —խորհուրդի և մտքի խօսքը։

Երբ ազգերու ազատութեան պատմութեան վրայ ակնարկ մը կը ձգենք, հոն ալ ձայն մի է որ ստեղծագործ հրաշալիքներով հանդէս կուգայ՝ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՁԱՅՆԸ։

Նախապատմական դարերու մէջ քարերի բոցավառ մացառը կը տեսնենք։ Մովսէս հայրենասէր, գիտուն ու վարանդի հովիւը՝ ցուպ ի ձեռին, անզուսպ յափշտակութիւնով մը դէպի հոն կը դիմէ, և ահա՛ բոցերուն մէջէն ձայն մը կ'որոտայ՝, «կոշիկներդ հանէ, սուրբ է հոս....։ Իսրայէլի հայրենեաց ձայնն է, և կըսէ ան, "Իմ ժողովուրդիս տառապանքը տեսայ, անոր հառաչանքը իմ ականջիս հասաւ։ ահա՛, բանի՛ և վարդրա, թող դարձուցէ Փարաւոնի լուծը և վերադառնայ Քանան,— Հայրենիքը։

Հայրենեաց այս ձայնը կեանքի հզօր ելեքտրականութիւնով մը կը սուրայ, կ'երթայ կը հասնի Եգիպտոսի լեռնաձև բուրգերուն տակ գրաստական աշխատութիւններու դատապարտուած, ազիսի բեռներուն տակ կքած և տարհապարակ վարողներու խարազանին տակ վիրաւոր ու ստրկացած Իսրայէլին. և ա՛հա, անոր լքուած, ու ճնշուած սրտէն խանդավառ երգ մը կը փրթի, «Իմ հայրենիք զիս կը կանչէ՛....»։ Հայրենեաց այս ձայնը հո՛ն այդ յուսակտուր, սմքած ու ընկճած ժողովրդի մարած մեռած սրտերուն մէջ կայծակներ կը յարուցանէ, առիւծներ կը զարթուցանէ. և ահեղ որոտումներ ու մռինչներ Եգիպտոսը ի հիմանց կը սարսեն։ Փարաւոնի գահը կը ցնցուի. երկինք կը մթագնի, ամպերը կարկուտ կը տեղան. աղբիւրները, գե-

Յարցեր արծարծող գրութիւններու առջև ալ անձնական ու եսամոլական խնդիրները գործ ունենալու չեն, ուր տղայական անփորձ կեանքերը բեմը ելլելու չեն, աւերելու ու ալրշտկելու մեր ազգային ու եկեղեցական սրբութիւնները։ Հոս ուրեմն լուրջ փարձառութիւն, գործնական ազգասիրութիւն և մարմնացած քրիստոնէութիւն ու բարոյականութիւնը հրապարակ իջնելու են։ Հոս կ'ուզենք տեսնել Հայ կարող գրողը. Հայ ազատամիտ եկեղեցականը. Հայ պատուելին. Հայ վաճառականը. Հայ լուրջ յեղափոխականն ու Հայ համեստ կինը։

Ամերիկայի Հայ Հրատ. Ընկերութեան
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ձայն Հայրենեաց»ի պատասխանատու խմբագիրներն են Տեարք Վ. Շահէ՛ի և Գ. Պ. Զիլիճեան։

Մեզ պիտի աշխատակցին շատ մը լաւագոյն գրողներ, որոնցմէ Տեար Ասկան—Նազարի մի շատ գեղեցիկ յօդուածը կը հրատարակենք այս անգամ։

Տեար Սուրէն Սուրէնեան, որուէ կապ չունի խմբագրութեանս հետ։

* * *

Կը յայտարարենք որ այլևս եռամսեայ բաժանորդագրութիւն չենք ընդունիր։ Վեցամսեայ բաժանորդագինը 85 սենթ է. տարեկան բաժնեգնի կէսն աւելի. լրագրական օրինաց համաձայն։

Մեր բաժանորդները «Ձայն Հայրենեաց»ը պիտի ստանան Տիգրիսի փոխարէն։

Բաժնեգնի փոխարէն նամակագրաշար չենք ընդունիր։

Կը խնդրենք ուշադրութիւն դարձնել մեր նոր հասցէին՝

American Hai Publishing Co.,
209 E. 23d St., N. Y. City.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐ Կ'ԵՐԹԱՆՔ

Ա.

Ո՞ւր արդեօ՛ք, ու՞ր կ'երթանք։ Դէպի ու՞ր։ Ո՞ւր կ'առաջնորդէ մեզ, Հայերիս, ներկայ անորոշ, անկերպարան կացութիւնը։ Ո՞վ է որ պիտի լուծէ այս առեղծուածը։ Ո՞վ պիտի լինի այդ ամենակարողը։

Ո՞ւր կերթանք իսկապէս. դէպի նոր օր ու նոր կե՞անք, թէ՛ անէութիւն ու գերեզման. նոր ժամ ու նոր լոյս արև՞, թէ՛ դէպի կորուստ մահաբեր....։

Կ'երթանք ու՛ր։ Դէպի ե՞տ թէ դէպ առաջ, դէպ արիւնլիր արևե՞լք.... թէ՛ դէպ անգութ ու խուլ արևմուտք.... դէպի սառն ու ցուրտ հիւսի՞ս.... թէ՛ դէպի խորշակաբեր հարաւ ...

Կ'երթանք ո՞ւր։ Լուծեցէք այս հարցը, դո՛ւք, Հայ հասարակական անթիւ գործիչներ, դո՛ւք՝ Հայ յեղափոխութեան անհամար վարիչներ, ամե՛նքդ ալ ղեկավարներ ...ամե՛նքս ալ ղեկավարներ....։

Այժմէութիւնը թմրեցուցիչ է, քուն բերող .... և այդ ամեն տեղ, թէ Հայրենիքի և թէ արտասահմանի մէջ, ոսկեզօծ

տերը և Լիճերը արիւնի կը դառնան, մահը իր սև թևերը կը տարածէ ամէն կողմ. կեանքը կը հոսի հան անդրանիկները կը ջարդուին. Փարաւոնի սիրտը ահ ու դողով կը լցուի և կըսէ՝ «գացէ՛ք։

Երէկուան տարուկ ժողովուրդը իր հայրենեաց ձայնովը զօրացած՝ յոյժ-կան բանակը կը կազմէ ու կը շուտ։ Ծովը անոր առջև իր անդունդներէն երկուքի կը ճեղքուի. ճամբայ կուտայ այդ յոյժ-ապանծ ժողովուրդին. որ իր ազատութեան երգերովը յառաջ կը խաղայ, դէպի հայրենիք. դէպի Քանան։

Ե՞ր։ Հայ ժողովուրդը ա՞յնքան ինքնավստահ, ա՞յնքան ահեղ եղած է, որքան Տիմուր գեաին եզերքը։ Այն օրը, երբ Հայն ամեն ատենէ աւելի ջլատուած. իր գահէն, իր բանակէն, իր քաջերէն զրկուած. պատմական բոլոր անբաղդ ժամանակներէն առաւել ինկած, անակը ու անպաշտպան եղած էր, այն օրը՝ երբ Ցազկերտի ամէհի բանակը կասած կը յարձակէր զոհին վրայ, անոր աստուածութիւնները սանակոխ ընելու, անոր եկեղեցիները կռատուններու վերածելու, հայութեան սիրտը սպաննելու, անուշիր ջնջելու։ Այդ պահուն՝ հայ հայրենիքը ձայն տուաւ՝ «Իզէ՛ն ի վրէ՛ժ» որոտաց, և ահա՛, ինկած զոհի երակներու մէջէն կրակի հոսանքներ անցան, անոր սրէն բոցերու լեռներ բարձրացան, անոր աչքերը շանթալից երկինքի պէս կայծկլատացին. հո՛ն լքուած և յուսահատ ժողովուրդը ծեր ու երիտասարդ, մանչ ու աղջիկ պատերազմի ոգիով հրդեհուեցան, փայլակնացայտ ամպրոպներու պէս՝ իրարու վրայ կիսուեցան։

Ակ կապուած զոհը վիրաւորուած առիւծներու, դիւցազուններու բանակնէ։ Անհաւասար կռիւին մէջ Վարդան իր քաջերովը ինկած. պարսիկ թեան սև պատանքը տարածուած Հայ բանակին վրայ, ոակայն Հայ հայրենիքը ընկճուած չէ՛ր։ Հայրենեաց ձայնը մինչև իր մեծին զաւակին իրանոյս կը կարդար և կը հրաւիրէր դէպի զոհին, սեղանը, և այդ ձայնը [illegible] բանակ մը կը [illegible] Գարսիոյ յաղթող բանակին առջև. և զարհուրանքի քամիներ մը կանցնէր թշնամեաց երակներուն մէջէն անոնց արիւնը կը սառէր. անոնց ձեռքերը կը դողային, անոնց ծունկերը կը կիսատէին, անոնց զէնքերը գետին կը թափէին և հայութիւնը կը պարզէր վերջնական յաղթութեան դրօշակը։

Ի՞նչ ըրած է հայրենեաց ձայնը բոլոր ազատագրեալ ազգաց պատմութեան մէջ....։

Հայրենեաց ձայնը ստաստուածային ստեղծագործ և ամենազօր ձայնին կը նրմանի։

Հայրենեաց ձայնին է որ կը զանգանք արձագանք տալ. անով ներշնչուելով՝ անով զգաւորուելով՝ անով դաստիարակուելով՝ և անով մեկ ազատութեան յառաջդիմութեան և ընդհանուր բարեկեցութեան սուրբ կռիւը։

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԴԷՊԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Կ՚երթա՞նք...։ Կը քալենք լերդացած արիւնի ծովէն, վիշաբ գրկած ու ցաւին փարած։ Մեծ վէրքը ունինք։ Հայրենեաց սրտին մէջտեղ անոգոք սլաքները կարմիր կը կութեցնեն, ու մեծ Մօր աչերէն կարմիր կայլակները կ՚ինչան։ Ընկած է Մաքը, ճիւղակտուր է նա, բայց հոգին տակ ամրապինդ է հնադարեան Արմատը...։

Կ՚երթա՞նք...։ Կերթայ ցանուցիր բանակը, թշնամուին նենգ հարուածէն զարնուած, պատերազմի դաշտին վրայ անհաւասար կռուէն կիսամեռ ընկած, ներքին դաւաճաններէն մատնուած, անոնց յուզողական գորովալիր համբոյրէն խաբուած։ Բայց կ՚երթայ ան հաւաքուած Գաղափարին շուրջ։

Հայրենիք մը ունինք։ Ցաւին Հայրենիքն է ան։ Դարեր են հոլովուեր, դարեր են անցեր, ու սա դարերը բերեր են սա ցաւը, տարեր են սա ցաւը։ Ու այսօր ցաւը եկած ու սարկացուցած է զանի։ Գիշերին մէջ վախտ ու հիւանդ երևակայութեան մարդուն վրայ ծանրացնող ահռելի, լպիրշ սատանային նման բռնութիւնը ծանրացած է մեր վրայ, ու սա ահաւոր ճնշումին տակէն կը տոռթանք. կը բարձրանանք ու կը բարձրանանք...։

Կերթանք ցաւին հետ։ Ցաւը մարդանդաձին ու Հայուն մշտական ընկերն։ Ան չի բաժնուիր մեզմէ։ Ու սարկութիւնէն բարձրացողը ցաւերուն մէջէն պիտի անցնի։

Ատեն մը ազէտ էինք, մեր զգացումները մեռած գոհ էինք մեր վիճակէն, մեր [illegible] հասանելու գիտակցութիւնը չունէինք։ Անիրա[illegible] մեր ձախ երես ապտակուին աջնալ կը դարձնէինք։ Բայց այն [illegible] լացը բոկ[illegible]խուեցաւ, ու միահամուռ պոռթկաց ընդհանուրի կուրծքէն։ Ալ երկար քունէն զարթնած ենք։

Բալեցինք քնաթմբաս։ Գլուխնիս պատէ պատ տուինք, արիւնխռնած աչքեր բացինք սա ծանրացող բռնութեան դէմ։ Երերացինք, շարժեցանք սիալ ու ուղիղ։ Կանգնեցա՛նք. ընկա՛նք։ Բայց ալ օրօրին երգը չպիտի լսենք, Մօր մը լճացած տրցունք, ազգի մը ծով արիւն բացուած է մեր առաջ որոնց ալիքները դղրդացող հառաչի մռնչիւն կը հասցնեն մեր ականջներուն, քա՞ր ենք չը լսելու, անի՞րա ենք, չը զգալու։

Կերթանք այն ճանապարհով որ գծուած է դէպի ազատութիւն ցիմող ազգերու համար։ Ահա՛ մէկը կանգնած դէպի ե-ցեռնենք։

Հայրենիքի մէջ եղող հայերէն մի մասը անօթի կը մեռնի, միւս մասը թէև ընդհանուր գոյն ունեցող կոտորածի զոհ չերթար սակայն դարձեալ անոնի մէջ, ճանապարհների վրայ արտերի մօտերը կը մրթուին ու կը թալանուին, կը բռնաբարուին ու կը հալածուին, միայն հատ հատ....։ Փոքրամասնութիւն մը կայ թերևս որ քչիկ մը հաց կուտէ, այն ալ միշտ ապահով վիճակի մէջ տիրող «բարեխնամ Սուլթանական կառավարութեան?!!» բէժիմի շնորհիւ։

Եթէ կայ այս բոպէիս ուրախալի երևոյթ մը այնտեղ, մեր հայրենիքին մէջ այդ այն է, որ համեմատաբար գիտակից դասակարգը ամէն տեսակ զոհողութիւններ յանձն առած անձնուիրաբար կ՚աշխատի կրթական գործին ո՛րքան կարելի է զարկ տալ։

Մերկ ու տկլոր, անտէր ու թափառական հայ որբերի համար որբանոցներ կը շինուին և օրէ օր կաւելնայ առանց թիւը հայ մանուկը կը պատսպարուի, կը խնամուի ու կը կրթուի այդ յարկերուն տակ։

Քար ու քանդ եղած ուտուտնարանները կը վերաշինուին, կը բացուին, և նորերը։

Այո՛, աւելի քան ուրախալի երևոյթ է այս, կը նշանակէ որ այսչափ ուժասպառ եղած ժողովրդեան մէջ տակաւին ոյժ կայ, ձգտում դէպի գոյութիւն և բարեաւ գոյութիւնը։ Հայ ժողովուրդը դարերի ընթացքին մէջ իսկական տիպար եղած է տոկունութեան, կամքի ու հաստատամտութեան, իր գոյութեան կռուին մէջ։

Արևելքի վայրենի ու բարբարոս ազդերով շրջապատուած, յաճախ բուրումնաէտ ծաղիկ մ՚է եղեր անոնց մէջ, յաճախ քաղաքակրթուելու, կուլտուրապէս յառաջդիմելու աւելի ընդունակութիւն է ցոյց տուած քան զինքը շրջապատող օտար ազգաբնակութիւնները։

Նոյնպէս դարերի ընթացքին մէջ իր կազմած նկարագրով բարոյապէս միշտ աւելի բարձր մակարդակի վրայ գտնուած է ու կը գտնուի նա, չնայելով տակաւին վազուց իրեն տիրապետող որքան ոտի ու լեղի նոյնքան և դառն ու անտանելի պայմաններն...։

Ճանչցուած է ազգ մը որ ամեն տեսակ արհաւիրների մէջ իսկ իր յարատև, յամառ ու քրտնաջան աշխատութեամբ գոյութիւն պահպանելու մեծ կարողութիւն ունի։

Ո՛չ, ո՛չ, չվհատինք երբէք հաւատք ունենանք, թէ և անորոշ է Հայու ներկայ կացութիւնը, թէ և անգոյն, սակայն նա շատ է տեսեր այսպէս օրեր ու շատ ալ անցուցեր։

Նա կապրի այնչափ, ցորչափ կ՚ապրի մարդկութիւնը, ցորչափ կապրին երկինքը ու երկիրը։

Միայն յուսալիր նուիրուինք անոր գոյութեանը վայել, փայլուն վիճակին հասցնող յեղաշրջման գործին, անոր բարբարութեան գործին, որու միջոցով մեզ երբեմնի վիճակակից, իսկ այժմեան ազատ ու երջանիկ Զուիցերիացիներ, Հերոէք, Պոսնայիներ, Ցոյներ, Պուլգարներ, Երկուան Հելլէնորդի Կրէտացիներ, վերջապէս կարողացան թօթափել զիրենք կաշկանդող շղթաները, կարողացան հասնիլ իրենց պանծալի նպատակին։

Նուիրուինք յուսալիր հաւատքով, ազգեր ու ժողովուրդներ ազատագրող յեղաշրջման գործի ի կատար հասնելուն, որպէս զի համարեա ցարդ գերմանական ոյժով մը, դիմացող այդ ժողովուրդը, Հայը, ներկայի և ապագայի մէջ ալ կարենայ էութիւնը յարատևող քաղաքարթեալ ազգերի նորանոր լուսաւոր քայլերի հետ զուգնթացաբար առաջ ընթանալ։

Այնքան դիմացաւ Հայը, այնքան ապրեցաւ, իսկ այսուհետև ապրելու համար անպայմանյեղաշրջում պէտք է անոր, յեղաշրջո՛ւմ, դէպի լոյս, դէպի ազատ օր, դէպի բարօր կեանք։

Ի՞նչ է պողպատի երկաթի և կամ

մած կը վերապրանան դէպի երկի՛նք... իբր մարմնացեալ՝ օրհնութեամբ և անէծքով խառն՝ բողոքներ.... փառաբանութիւններ ...ու թերևս չանթալից թիւնաւոր նետեր ...արդիւնք արդար զայրոյթների..։

Այդ բոլորը դէպի երկինք կը վերապրանան միաժամանակ, ուր հրեղէն սլաքներ արձակելով ի սիրուս աշխարհի, սլաքնե՛ր, որոնք սա Եւրոպայի քրիստոնեայ պետութեանց խուլ ականջներն ծակելու կերթան... քարացած որտերն ջիղ ու երակներն խոցոտելու կերթան...։

Սակայն խո՛ւլ է «մարդասէր» Եւրոպան, քարացած է նա, խո՛ւլ, անտարբեր է նա, անտարբե՛ր...։ Ու այս բողոքները կը վերապրանան, այս սլաքները կը նետուին մանաւանդ այն ժամանակ երբ պետութիւններ ազգեր ու ժողովուրդներ «յանուն մարդկային ընդհանուր խաղաղութեան, հաւասարութեան ու եղբայրութեան» իրարու կը մօտենան պայմանագրելու !!!։

Գեղեցիկ միտք, հրաշալի՛, կենսաբեր ծրագիր. բայց ի՞նչ արդիւնք կունենայ պայմանագիր խաղաղութիւնը իրականութեան մէջ. դիւանագիտական անողոք խաչի մը տեղի չի՞ տար արդեօք, ազգերի նոր դարագլուխ մը բանալով մարդկութեան համար... սակայն այդ անոգ ազգարարութիւն՝ անով դաստիարակիչ՝ և անով մեկ ազատութեան յառաջդիմութեան և ընդհանուր բարեկեցութեան սուրբ կռիւը։

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

ԴԷՊԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Կ՚երթա՞նք...։ Կը քալենք լերդացած արիւնի ծովէն, վիշաբ գրկած ու ցաւին փարած։ Մեծ վէրքը ունինք։ Հայրենեաց սրտին մէջտեղ անոգոք սլաքները կարմիր կը կութեցնեն, ու մեծ Մօր աչերէն կարմիր կայլակները կ՚ինչան։ Ընկած է Մաքը, ճիւղակտուր է նա, բայց հոգին տակ ամրապինդ է հնադարեան Արմատը...։

Կ՚երթա՞նք...։ Կերթայ ցանուցիր բանակը, թշնամուին նենգ հարուածէն զարնուած, պատերազմի դաշտին վրայ անհաւասար կռուէն կիսամեռ ընկած, ներքին դաւաճաններէն մատնուած, անոնց յուզողական գորովալիր համբոյրէն խաբուած։ Բայց կ՚երթայ ան հաւաքուած Գաղափարին շուրջ։

Հայրենիք մը ունինք։ Ցաւին Հայրենիքն է ան։ Դարեր են հոլովուեր, դարեր են անցեր, ու սա դարերը բերեր են սա ցաւը, տարեր են սա ցաւը։ Ու այսօր ցաւը եկած ու սարկացուցած է զանի։ Գիշերին մէջ վախտ ու հիւանդ երևակայութեան մարդուն վրայ ծանրացնող ահռելի, լպիրշ սատանային նման բռնութիւնը ծանրացած է մեր վրայ, ու սա ահաւոր ճնշումին տակէն կը տոռթանք. կը բարձրանանք ու կը բարձրանանք...։

Կերթանք ցաւին հետ։ Ցաւը մարդանդաձին ու Հայուն մշտական ընկերն։ Ան չի բաժնուիր մեզմէ։ Ու սարկութիւնէն բարձրացողը ցաւերուն մէջէն պիտի անցնի։

Ատեն մը ազէտ էինք, մեր զգացումները մեռած գոհ էինք մեր վիճակէն, մեր [illegible] հասանելու գիտակցութիւնը չունէինք։ Անիրա[illegible] մեր ձախ երես ապտակուին աջնալ կը դարձնէինք։ Բայց այն [illegible] լացը բոկ[illegible]խուեցաւ, ու միահամուռ պոռթկաց ընդհանուրի կուրծքէն։ Ալ երկար քունէն զարթնած ենք։

Բալեցինք քնաթմբաս։ Գլուխնիս պատէ պատ տուինք, արիւնխռնած աչքեր բացինք սա ծանրացող բռնութեան դէմ։ Երերացինք, շարժեցանք սիալ ու ուղիղ։ Կանգնեցա՛նք. ընկա՛նք։ Բայց ալ օրօրին երգը չպիտի լսենք, Մօր մը լճացած տրցունք, ազգի մը ծով արիւն բացուած է մեր առաջ որոնց ալիքները դղրդացող հառաչի մռնչիւն կը հասցնեն մեր ականջներուն, քա՞ր ենք չը լսելու, անի՞րա ենք, չը զգալու։

Կերթանք այն ճանապարհով որ գծուած է դէպի ազատութիւն ցիմող ազգերու համար։ Ահա՛ մէկը կանգնած դէպի ե-

---

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Կ. Պոլսոյ օրագրերը կը հաղորդեն՝ «Տնհմային մշակ բազմահմուտ գրքագէտ Պրն. Մատթէոս Մամուրեան իր ծերութեան պատճառաւ, բժիշկներու հրահագին համաձայն, իր սիրած գրքական հրապարակէն պիտի մեկուսանայ, ու այս առթիւ Իզմիրի Հայոց պիտի տօնեն յոբելեանը ազգային մշակին»։

Արդի հայ գրագէտներու երևելի դէմքերէն մին է Պրն. Մ. Մամուրեան, և որուն յոբելեանը տօնելու համար Զմիւռնիոյ հայերն արդէն որոշած են յանձնախումբ մը՝ երկու կղերական և վեց աշխարհական անձերէ բաղկացեալ, նախագահութեամբ Զմիւռնիոյ Հայոց Առաջնորդ Գեր. Մելքիսեդեկ Եպ. Մուրատեանցի։

Պրն. Մ. Մամուրեան մեր նոր գրականութեան մէջ ամենաառաջնակարգ տեղ բռնողներէն մին է, 29 տարիներէ ի վեր անխոնջ ու անթօյլ կերպով կը հրատարակէ "Արևելեան Մամուլ"ը, որ իր գրական, իմաստասիրական ու ազգագրական յօդուածներով ազգային գրականութեան մեծ զարկ մը տուած է։ Իր պատմական, վիպական ու բարոյական երկերը, մեր գրական գարդերն են։ Մամուրեան հասարակական գործիչ ալ է, Պարիսի գիւանագիտութեան պաշտօնի հիմնադիրն է նա, եղած է տեսուչ Կ. Պոլսոյ Ներսէսեան Զմիւռնիոյ Մեսրոպեան ու Հռիփսիմեան երկսեռ վարժարաններու։

Զմիւռնիոյ հայերը գեղեցիկ գաղափարն ունեցած են տօնելու, այս նշանաւոր տաղանդի յոբելեանի հանդէսը, որ տեղի պիտի ունենայ, սոյն տարուայ Հոկտեմբեր 17—29 —ին կիրակի օրը։ Մասնաւորապէս Ամերիկայի մէջ գտնուող Թիւրքահայաստանցի հայերս բարոյական պարտականութիւն մը ունինք միացնելու մեր խանդ ու յարգանքը Զմիւռնիոյ հայոց հետ, հաւաքաբար զրկելով մեր դրամական ու այլ նուէրները մեծ Յոբելեարին։

Նուէրները ուղղանագրուելէ յետոյ տեսարակով մը պիտի հրատարակուի։

Յարգ մեռնելէն յետոյ միայն կը տօնէինք յոբելեան ամէն անոնց, որոնք նշանաւոր հանդիսացած են ազգին մատուցած իրենց ծառայութիւններովն։ Ազգային գործիչներէն շատ քիչերն են, որոնք իրենց կենդանութեան տեսն վայելած են, այդ արժանաւոր յարգանքը։

* * *

Ուսարի մէջ գրասիրաց խմբակ մը, իր օրուան խնդիրն ըրած է Մ. Մամուրեանի յոբելեանին առթիւ իր նուէրներ դրկելը։

Մենք հաւատացած ենք, որ Ամերիկայի ամեն հայ սրտակ վայր նոյն պարտաճանաչութիւն պիտի ունենայ։ Աւելի լաւ չ՚ըլլա՞ր որ նուէրները հաւաքաբար զրկուի 'ի դիմաց Ամերիկայի հայ գրասիրաց։

Յոբելեանը տօնելուն երկար ժամանակ չըկայ, հետևապէս նուէրատուները շտապելու են, և եթէ յարմար դատուի զրկեն Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Սարաֆեան Սրբազանին։

Ուսար ԳԱՌՆԻԿ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՄԻՋՈՑԸ

(Նամակ Վանէն)

Յուլիս 15 Վան

Հայաստանի տնտեսական ամենակարեւոր քայքայումը, երկրագործութեան անկումէն ծնունդ առած է։ Երկրագործի ներկայ վիճակը, անոր անհուն տառապանքը, ամբողջ խորհուրդնիս գրաւած է։ Ի՞նչ ճար կայ ասոնց։ Անմարդ, անանասուն, ի՞նչպէս առաջ երթայ երկրագործութիւնը, հա՞ց ունենան...։ Մինչև երբ ժողովրդի նկարագիրն սարկացնող սա մուրացկանութիւնը։

Վաճառականը դեռ իր սաղը կը զարնէ, ամեն պատեհութեամբ կոպտարարու մշակը։ Անոր կարօտութիւնը զինքը կը պարտաւորեցնէ դիմել ամեն անազնիւ միջոցներու, հաց տալու ծանր պարքո՞վ..., անոր տունը քանդելով։ Հիմնական նպատակ մը պէտք է, և այն է երկրագործութիւնը զօրացնել։ Բարեհամբաւ Մր. Ալլէն այս կէտը շատ լաւ նկատեց, եզներ առաւ տուաւ գիւղացուն, սերմ տուաւ։ Բայց տասնք 1000-էն աւելի ըլլալով հանդերձ, դեռ քի՛չ, շատ քի՛չ են։

Ներկայ նպաստաբաշխումները հազիւ մեռնելէ կազատեն ժողովուրդը։ Տեսնելու բան է, այն ահագին բազմա-

թիւններ, հալած, մաշած, մերկ...։ Կառավարութիւն ալ բարեհաճեցաւ սերմ տալ կարօտելոց։ Բայց վէրքը չի դարմանուիր, մինչև Ժողովուրդը չըկարենայ ինքնիրեն օգնել, և այս չպիտի կրնայ, քանի երկրագործութիւնը ներկայ վիճակի մէջն է։ Միակ միջոցը պէտք է զօրացնել երկրագործութիւնը մեքենական այժով։ Գիւղացին պէտք է ունենայ վարելու, քաշելու և մանրելու մեքենայ որ ժամանակ և միջոց ունենայ, իր արտերը պարարտացնելու։ Յայտնի է թէ վաճառական իր ապրանքն չպիտի փորձէ գործածել իր համար անտարակոյս շահաբերութեան համար, զի նոցա բարեկայութիւնն է ունելի կողոպտիչ պայմաններով կիսարարութիւն, փոխառութիւն ընել երկրագործին, վերջէն ըլլարովին տէր ելլելու անոնց կալուածներուն։ Երբ սա տաղերը կը գրեմ, տրքան պատմութիւններ, անձեր, գարմանուածներ կայծակի արագութեամբ կանցնին մաքէս, ես ըլլարովին վստահեցնեմ ձեզ թէ երկրագործը այս տարի իր հունձքին բնաւ տէր չէ, այլ ըլլորը պիտի վճարէ կէս անկերին, պարտապահանջին ու տուրքին։ Գալ տարի ալ նոյնպէս, և ո՞վ գիտէ դեռ քանի՞ տարի։ Սա մի բնական հաշիւ է, երբ երկրագործն առաջներ քաղաքացիի մ բ ի պ ա ն, մշակ, զառնալու պարտաւորուած էր, հապա՝, որքան աւելի հիմա։ Ո՞վ պիտի կայնեցէէ սա հոսանքը՝ այս կործանումն, այս ներքին անձնատպանութիւնը, անասպանութիւնը, գեղատպանութիւնը..., միայն գիւղացիին օգնելու մարդասիրութիւնը, ծաղկումն ու մեքենան, որ իրեւ առաջին օրինակ ապացուցանէ հնարաւոր դիւրութիւնը, ան առեն օրինակն պիտի ընդհանրանայ և երկրագործն ինքզինքն ապրեցնելու։ և հարստանալու վիճակին մէջ պիտի գտնէ, յառաջադիմութեան այն հետեւանքով, որուն դժբախտաբար մի հեղինակ գտնել դժուար կամ անկարելի է։ Այսպիսի մեծագործութիւն մը միայն իրենց անձնական շահին չը նայողներու յատուկ փառքն է։ Ճշմարիտ հայրենասիրութիւնը, հայրենիքի ղըրական օգուտը մտածելն է։ Վերջապէս այս և իմ համոզումը, կը հաստատեմ նաև թէ իրականութիւնը—, թէ պէտք է ժողովրդի ներքին կեանքն զարգացընել, և սա կեանքն երկրագործութիւնն է։(1)—

* * *

(1) Երկրագործութեան մասին մեր երկրագործական ուսանող մի աշխատակցէն ստացած ենք մի գեղեցիկ բանասիրական յօդուած, որ իր կարգին պիտի հրատարակենք։

ԽՄԲ.

ժեռքարի դիմացկունութիւնը, եթէ հայու դիմացկունութեան հետ։

Զէ՞ որ պղպատն ու երկաթը վարպետի անդանին վրայ դարբնուելէն խոփ ու մանգաղ լինելէն յետոյ՝ երկրագործի ձեռքին մէջ կամաց կամաց փխրուն հողերի հետ ընդհարուելով կը մաշուի, կը հատնի, կ'անհանայ։ Նոյնպէս քարը քարտաշի բրիչին տակ փշուր փշուր կը ժշրտուի հիւլէ ու փոշի կը դառնայ, իսկ Հա՛յը։ Հա՛յը։ միսէ ու ոսկրէ, ջիղ ու երակէ կազմուած հայ մարդը պատմական այնչափ մուրճերին տակ անցեալէն եկած այնչափ հալածանաց ու տառապանքներին ենթակայ, բայց և այնպէս տակաւին դիմացեր է ու կը դիմանայ, տակաւին կը պահպանէ իր էութիւնը։ այսք՛ան ներքին ու արտաքին կեանքի ընդհարումներին մէջ ա՛յսքան իր արիւնէն կազմուած արնէ լճերին մէջ....։

Ոչ՛ ու դարձեալ ո՛չ։ այսպէս ժողովուրդ մը Զի Մեռնիր։ Կապրի նա, դարեր կապրի։

Հայը ոկսեց իր յեղաշրջման գործը, ու առ այդ մեծ պատասխանատուութիւն կայ ներկայիս գործող, ասպարէզի վրայ գտնուող երիտասարդութեան վրայ, նայն իսկ Հայուն արտաքուստ շրջապատող քաղաքական դիպլոմատիական ի՛նչ ի՛նչ հանգամանքներն ու ներքուստ իրեն մէջ բացակայող ու և է պարագաները ուշացնեն յեղաշրջման գործի օր առաջ իրականանալն, գէթ քաջութիւն ունենանք ԳՈՐԾԸ վառ ու ընթացիկ վիճակի մէջ իրբ սուրբ աւանդ ու կոակ մը պարզերես կերպով յանձնելու արիւնով սնած նոր հատնող բողբոջող մատաղ սերնդին։

Եւ ոսկայն այժմ Հայու ներկայ կացութիւնը ինչո՞ւ այսպէս անկերպարան է։ Կ'երթանք ո՞ւր....։

Թողնենք մի կողմ անոր արտաքին պայմանները... մի՞թէ ներքին կեանքին մէջ Հայուն կը պակասի՞ հատատատ կըռուանի վրայ հիմնուած զօրաւոր ոյժ մը, նկարագրի տէր վարող մարմին մը, կամ որ նոյնն է յառաջ մղող ուժգին ազդակը։

Երեւի կը պակսի։ Երեւի ներքուստ այդ ոյժն, այդ մարմնի և վերջապէս այդ ազդակի բացակայութիւնն է պատճառը անոր ներկայ ներքին կեանքին կացութեանը և տիրող անկերպարանութեան։

Լուծեցէ՛ք այս առեղծուածը, գտէ՛ք անթիւ զեկավարներ, գտէ՛ք անհամար գործիչներ, գտէ՛ք միայն պիտի կրնաք լուծել, որովհետև արդէն իսկ ձեր մօտ է ատոր բանալին, թերևս առանց ձեր գիտութեան։

Գահիրէ ՈՍԿԱՆ — ՆԱԶԱՐ

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՑԷՆ

Սուչավայ 15 Յուլիս 99

Սուչավայի հայ հին գաղթականութիւնը, դեռ պահած է Անիի յիշատակները, դեռ հոս անաղարտ կը մնան հայկական աւանդութիւններն ու սովորութիւնները։ Բաղաքիս հիւսիսային կողմը տասը վայրկեան հեռու կը գըտնուի հայկական վանք մը, ագարակի մը մէջ կառուցուած հնաւանդ շինութիւն մը, շրջապատուած պարսպով։

Հնէն մնացած սովորութեան համաձայն, ամէն տարի եղիա Մարգարէի ծոնի օրը, այս վանքին մէջ քանի մը գառներ մատաղ կընեն։ Այս տարի ալ եկեղեցական թափորը՝ քաղաքիս դուրը Պաշ եկեղեցին՝ հոն ուղեւորուեցաւ տարբ պատարագ մատուցանելու և մատաղը օրհնելու։ Պատարագի առեն Գեր. Արսէն վրդ. Վեհունի ազգու ու յուզիչ քարոզ մը խօսեցաւ։ Նախ յայտնեց Կուռանհօմօռա քաղաքի հրդեհուած հայերու համար Վեհափառ Հայրիկի զրկած 200 ռուպլիի նուէրը։ Ապա սրատյոյզ կերպով պատկերացուց հայ անտէր որբերու վիճակը՝ և ըսաւ թէ՝ այդ որբերը հայրենեաց համար նահատակուող քաջերի մնացած խեղճ ու անտէր զաւակներն են, հրաւէր կարդաց Սուչավայի հայերուն, որ մի որբանոց հաստատէին հոս, հայասանէն որբեր բերէին, անոնց ուսում ու արհեստ սովրեցնէին, որով որբերն իրենց աշքի առաջ ունենալով վառ կը մնար իրենց զգացումները։ Խիստ սրատուչ նկարագրեց Վանի սովեալներու վիճակը։ Անմիջապէս հանգանակութեան ձեռնարկուելով 200 ֆիօրին գոյացաւ, որ զրկուեցաւ Պատրիարքարան։

Պատարագէն յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ 1896 յունիս 3 — 14 Վանի և սրբ. Բարթողէմէոսի Վանքին Ս. Գործին համար նահատակուող քաջերու յիշատակին։

Շ. ՄԵԾԻԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր Խմբագիր

Հաճեցէք ձեր Պատ. թերթի մէկ անկիւնը տեղաւորել հետեւեալը։

Հոգարարձութիւնս նկատելով որ հանգուցեալ Վաղէնակ Ծ. Վ. Սիսակեանի գերեզմանի վրայ շիրիմ մը կանգնեցուելը անհրաժեշտ է, 'ի յիշատակ իւր ունեցած աղգօգուտ գործունէութեան առ հայ գաղթականութիւն, ուստի այս մասին հոգարարձութիւն պարտք համարեց հրաւէր կարդալ ընդհանուր հայ գաղթականութեան, որ ամէն անոնք որ կը փափաքին մասնակցել հանգուցեալին շիրմին ծախուց, թող հաճին իրենց նուէրը զրկել կարելի եղածին չափ շուտ հոգարարձութեանս հասցէին։

Աղգ. Հոգ. Հայոց Փրով.
Ատենադպիր Ատենապետ
Մ. Ց. Բէշէնեան Շ. Շահինեան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՆՈՐ ԱՐԳԵԼՔ ՄԸ

"Արմենիա"ի մէջ կը կարդանք, "Այս օրեր Թուրք կառավարութիւնը վերստի սկսեր է իր հին խստութիւնները ձեռք առնել, և "Մէսաժիրի" ու "Բաբէ" շոգենաւային ընկերութիւններու Սամսոնի գործակալութիւններէն Մարսէյլ իրենց կեդրոնին եկած հեռագիրներ կ'ապդարարեն, որ այսուհետեւ ալ Հայ չընդունեն իրենց շոգենաւերի մէջ Սամսոն տանելու համար, որովհետև տեղական իշխանութիւնները Բ. Դռնէն իրենց ստացած նոր հրամանների համեմատ չեն թուլատրեր հայերին որ Սամսոն երթան։

Այս տխուր լուրը կայծակի պէս շանթահարած և շուարեցուցած է այն ճամբորդ հայերը, որոնք Ամերիկայէն Մարսէյլ եկած և ըլլորովին պատրաստուած էին այսօր ճամբայ ելլել «Բաբէ» ընկերութեան շոգենաւով։

«Արմենիա» կը հաղորդէ որ Մարսէյլ գտնուող ճանապարհորդները խնդրագիր մը զրկած են Օրմանեան պատրիարքին և խնդրած են որ կարգադրութիւն մը ընէ իրենց վերադարձի մասին։

ԱԽԳԻՐԻՆՑ ԱՐՈՒՆ

(Ժողովրդական)

Ախպրանց արուն մէջ քարերուն,
Ինչի՞ կուլաս կուց կուց արուն,
Մեր սիրտ արիր դու էրէրուն,
Մատաղ ընեմ ես քս սիրուն։

* * *

Ախպըրանց արուն կարմի՛ր կարմի՛ր
Պուտ պուտ կաթար հազար հարիր,
Մեր սար ու ձոր կարմիր ըրիր,
Մեր աշխարհին ցաւեր բերիր։
Ախպըրանց արուն կարմիր բացուած,
Արնոտ շիբիմ կարմիր ծաղկած,
Արնոտ երկինք արիւն կուլայ,
Հայոց աշխարհ կարմիր քուլայ։
Արո՜ւն արո՜ւն հայու սրտէն,
Կարմիր վազեց մեր երակէն,
Ծաղիկ ծաղկեց նոր ու սիրուն,
Փունջ յօրինեց ախպըրանց արուն։

* * *

Ախպըրանց արուն մէջ քարերուն,
Կանցնի ձմեռ կուգայ գարուն,
Դու կը բացուիս վէր արերուն,
Ա՛խ ալ չի լաս կուց կուց արուն։

Վ. ՇԱՀԷՆԻ

ԲԱԿԱԲԱԿԱՑ

ՍՈՒԼԹԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆԸ ԴԱՏԱՐԿ Է

Ոստիկանութիւնը կը պաշտպանէ գանձային նախարարը թագուոցին մէջ։

Պերլին Օգոստ. 25. տեղական «Անցելիքը»ը Պոլիսէն հեռաւոր լուրը կը հրատարակէ։ Տնտեսական տագնապ մը վերահաս է. Օսմանեան վարկը անկման մէջ է։ Գանձային նախարարը (Բէչատ Պէյ) վճարմունք պահանջողներէն փախուստ տուած և տան մը մէջ ապաստանած է. որը այժմ ոստիկանութեան պաշտպանութեան տակն է։

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մէջ մօտալուտ յեղափոխութեան մը վախը երթալով կը հաստատուի։ Կառավարութիւնը յեղափոխական նորանոր դատապարտութիւններ կը գըտնէ։ Փարիզի Դքսուհին կը կարծուի թէ կապ ունի այդ դատապարտութիւններուն հետ։ Նախազգուշութեան համար Փարիզի տներն կողմերը զինուորական բաժիններ դրուած են. ձիաւոր գունդեր կը շրջին փողոցները. հրաման ստանալով որ անմիջապէս թնդանօթ արձակեն որեւէ ամբոխի վրայ, երբ խռովութիւն յարուցանելու նշան կուտայ։

Տրէյֆիւսի խնդիրը Ֆրանսայի քաղաքական հորիզօնէն սև ամպերու դուպարներ կը բարձրացուցնէ որոնք կը բարդուին ու կը ծանրանան և յեղափոխութեան ահեղ փոթորիկը և սոսկալի տեղատարափը անխուսափելի կերպով յառաջ բերելու ամեն երևոյթը կուտան՝ Տրէյֆիւսի դատավարութեան վերջանալու օրը, արձակուած վճիռը կուզէ թեր, կուզէ դէմ ըլլայ ամբաստանեալին։

Գերմանիոյ կայսրը վերջերս խօսակցութեան մը մէջ ըսած է թէ Ֆրանսայի մէջ յեղափոխութիւն մը անխուսափելի է։

Լուրջ կերպով կը կասկածուի թէ Փարիզի 1900ի արուեստահանդէսը տեղի պիտի ունենայ։ Շատ մը Գերմանացիներ որոնք կը պատրաստուէին Փարիզ երթալու՝ հիմա ետ կեցած են՝ որովհետև չեն կարծեր որ հոն կեանքի ու գոյքի ապահովութիւն կրնան ունենալ։

ԱՆԳԼԻԱ

Ամենավերջին լուրերէն կը տեսնուի թէ Անգլիա պիտի յարձակի Թրանսվաալի վրայ իր պահանջները զինու զօրութեամբ ընդունել տալու։ Թրանսվաալի մէջ պատերազմի պատրաստութեան տենդը բարձրագոյն ջերմութեան հասեր է։ Թրանսվաալի կառավարութիւնը վերջապէս յայտարարեց թէ Անգլիոյ պահանջներուն առջև, անկէ անդին քայլ մը իսկ չպիտի տայ. անգլիական զօրքերը սկսեր են քաշել դէպի Թրանսվաալ։

ՌՈՒՍԻԱ

Ռուսիոյ Սովը սոսկալի համեմատութիւններու կը հասնի։

Ռուսիոյ մէջ վախ մը ծագեր է թէ. մօտ օրերու մէջ աշխարհի վերջը պիտի գայ. այս պատճառաւ ժողովուրդը ահաբեկած է՝ ու ծայրահեղ իրարանցում կայ։ Գործաւորները գործարաններէն գործերնին կը ձգեն ու իրենց գիւղերը կերթան, որպէսզի հնացած քանի մը օրերը իրենց ընտանիքներուն հետ անցունեն։ Գործատէրերը տեսնելով որ այսպիսով գործերնին բոլորովին կը խանգարուի. ոստիկանութեան դիմեր են այս բանիս առաջն առնելու համար։ Եթէ այսպէս շարունակուի, առևտրական ահագին անկում յառաջ պիտի գայ։

ՃԱՓՈՆ

Յուլիս ամսոյ մէջ Ճափոնը դաշնագրութիւններով բոլոր մեծ պետութիւններուն կոդմանէ. իրենց ընկերակցութեանը մէջ ընդունուեցաւ իբր քաղաքակիրթ ազգ։ Այս թուականէն սկսեալ Ճափոնի մէջ գտնուող ամեն օտարական ենթակայ է Ճափոնի օրէնքին. ոստիկանութիւնը կրնայ զանոնք ձերբակալել որոնք պիտի դատուին ճափոնական դատարաններու մէջ։

Այս իրաւունքները զլացուած կը մընան Զինին՝ Բօրիային՝ Սիամին՝ Պարսկին և Թիւրքին։

Ասկէ հազիւ կէս դար առաջ երբ Ճափոնցի մը Ճափոնէ դուրս ուրիշ երկիր մը երթար վերադարձին կըսպանուէր՝ օտար աշխարհի հետ յարաբերութիւն ընելուն և իրեն հետ միաք մը. օտար սովորութիւն մը. վերջապէս օտար տպաւորութիւն մը բերած ըլլալուն ենթադրութիւնովը. իսկ այս օր այդ կայսրութիւնը ամբողջ ինքզինքը կը ձրգէ քաղաքակիրթ աշխարհի գիրկը. և որ աւելին է. քաղաքակիրթ աշխարհը սիրով կընդունի զինքը իր ընտանիքին մէջ։

Այս օր Ճափոնը, եթէ ոչ պաշտօնապէս, ազդեցութիւնով Քրիստոնէական ներգործութեան տակ է ամբողջովին։

Ահա թէ Քրիստոնէութիւնը և գիտութիւնը ինչ արդիւնքներ յառաջ կը բերեն ազգերու կեանքին մէջ։

Այս իրականութիւնը պէտք է վճռեմ յանդիմանութիւն մը ըլլայ այն կարգ մը հայ գրչակներուն. որոնք Քրիստոնէական կրօնը հարցուածելու յատկութեանը եղեր են՝ որոնք «նախատաչարումը կրօնքի արդիւնք» կը համարեն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՑՈՒՑԱԿ Բ.

ՎԱՆԱՑ ՍՈՎԵԼՈՑ

Նախորդ ցուցակի գումարը 313. Երկու աղգայինք $ 15. Համալեան եղբարք 5. Հայկ Զիթճեան 5. Պօղոսեան եղբարք 3. Պ. Ճաֆէրեան. Մ. Կարապետեան, Ց. Պարոնեան, Ց. Գալճեան, Ց. Ղազարոսեան Պ. Զանգալեան երկուական ոսկի, Գ. Գասպարեան Էքսէրճեան, Ս. Տ. Պետրոսեան, Մ. Կ. ասրեան, Պ. Գարրիէլեան, Մ. Գալուստեան, Ն. Թուրշեան, Պ. Յարութիւնեան, Ց. Մ. Հայրապետեան, Տ. Սէմէրճ. Գ. Ճէլլեան, Հայ մը, Հ. Գ. Մարկոսեան, Ց. Տօնապետեան, Թ. Պօղոսեան, Ս. Յորէլեան, Ց. Ս. Ալկ. Ազմէլեան, Մ. ահէմեան, Ց. Ահէմեան. Մ. Մանթաշճեան, մէյ մէկ ոսկի. Գ. Սօյլեան. Գ. Աւետիս-Հայ մը Մ. Գասպարեան, Ց. Տատեան, Խ. Զիլինկիրեան Խ. Գասպարեան, 50ական սենթ. Բագրատեան, Գ. Մ. Մկրտիչեան, Տ. Միհրանեան 25ական սենթ։

(Շարունակելի) Խոր. Վարդապետ

Տօքթ. Ց. Արշակունի, հեռաձայն նամակն ստացած է Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն, որոյ պատճէնը իրկած է մեզ ի հրատարակութիւն։

Պատրիարքարան Հայոց Կ. Պոլիս 31 Յուլիս 1899
համար 9505 — 493

Մեծապատիւ
Տօքթ. Յովհաննէս Էֆէնտի Արշակունի
ի Նիւ Եորք

Ստացանք ամսույս 6 թուականաւ ձեր պատուական նամակն և գանձեցինք 40 (քառասուն) անգլիական լիրայի դումարն. զոր ղրկած էիք իբր արդիւնք թատերական ներկայացման մը՝ կազմակերպուած ի նպաստ Վանայ սովատանջ մեր ազգայինք։ Ուրախ ենք որ քաղաքիդ մեր սիրելի ազգայինք ևս հեռաւոր տառապեալց նկատմամբ իրենց ունեցած գորովոյ ապացոյցներ ցոյց կուտան. բարենպաստակ ձեռնարկի մը արդեամբ օգնութեան ձեռք կարկառելով անոնց։ Ուստի կը ձօնենք ձեզ և այն ամեն ազնիւ անձանց՝ որք քաջալերած են ձեր ձեռնարկն. մեր հայրական օրհնութիւններն, մաղթելով երկնային անբաւ բարիքներ ամենուդ վրայ։

Մնամք ազօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
(ստորագրութիւն) Մաղաքիա Արք. Եպիսկոպոս

Նիւ Եորքի Հայ Երիտասարդաց Թանգարանի Մութիւնը կը խնդրէ մեզ յայտարարել որ Դաշտային հանգէսի զուտ հասոյթը եղած է 47 ոսկի 86 սենթ։ Մութիւն իւր շնորհակալութիւն կը յայտնէ Հայկազեան Կաճառի անդամներուն, Տեար Սարկաւագեանի և ամեն անոնց որոնք նպաստած են հանդէսի աւելի փայլուն ըլլալուն։

Սրտի խորին ցաւով կը լսենք Արժ. Խոր. Վարդապետին անցած կիւրակի քարոզին խիստ ախուր հանգամանքներուն վրայով։ Մանրամասնութեանց չենք մտներ։ Մենք միշտ այդ երիտասարդ ու եռանդոտ կղերականին համար յաջողութիւն ցանկացեր ենք, և օժանդակեր ալ։ Նոյն բարեացակամութիւնը տածելով՝ այժմ այսքան կըսենք։

Մենք կը փափաքինք որ նա ուրիշին վրայ յարձակելու տեղ իւր գործին նայի։ Հակառակութիւն սերմանելէն որ և է յաջողութիւն չկրնար քաղել։ Գիտնալու է թէ իր այն անուանարկած եկեղեցին աւելի ժողովուրդ երթալուն բոլորովին տարբեր ու բանաւոր պատճառներ կան։ Մենք կը փափաքինք որ այդ պատճառները գտնէ։ Նիւ Եորք շատ Հայ կայ։ Եթէ 200 Պատ. Խազօեանին երթան. 200 Պատ. Եուհաննայեան երթան, անդին դեռ 1000էն աւելի հայեր կը մնան, ատոնք իրեն կօգտեն։ Ատոնք եկեղեցին քաշելուն ճարը նայելու է այդ ճարը բոլոքականները հարուածելով չգտնուիր լաւ հասկնալու է։

Մենք կը ցանկանք որ Ամերիկայ իր լուսաւոր ազդեցութիւններովը օր ըստ օրէ փոխէ մեր հոգեւոր հովիւը, մենք չենք ուզեր ասկէ երկու տարի առաջ եղող անփոփոխ Խոր. Վարդապետը տեսնել։

Տիար Միքայէլ Մինասեան Խարբերդցի. որ Տարսօնի բարձրագոյն վարժարանին ուսուցչութեան պատրաստելու նպատակաւ երկու տարի է իվեր կուսանի ԵԷյ համաստարանի մէջ. վերջին քննութիւններուն առթիւ ընդհանուր գերազանցութեան պատիւը իրեն տրուեր է. այս կը նշանակէ թէ ինք իր բոլոր դասերուն մէջ գերազանց եղեր է։

Խ։ ԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սարգիս Հալաճեան.— ձեզ նամակ կայ խմբագրատան հաճեցէք ստանալ։

Լօվէլ.— Տ. Ց. կը հրատարակենք. հաղորդեցէք ձեր հասցէն։

Ուսար.— Գրագարանի վարչութիւն.— «Արմէնիա»ի թղթակցին դէմ ղրած հերքումներ. «Արմէնիա»ի ղրկեցէք.

Փրովիդէնս.— Վիրաւոր.— Զ'արժէ կարեւորութիւն տալ բարոյապէս ը կոծներուն։

Ֆիշպուրկ.— Կ. Մ. Ե.— Նոյն պատասխան։

Փրովիդէնս—Կ. Երեւանեան.— Հաճեցէք վճարել Տիգրիսի 78 թուէն մնացած ձեր պարտքը։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ՊԱՏԿԵՐՆԵՐ
(Մեր կեանքէն)
Գրեց
Վ. ՇԱՀԷՆԻ
Գինը 15 սենթ։ Քսան օրինակ գնողին մի օրինակ նուէր կը տրուի։
Դիմել հեղինակին,
Խմբագրութեանս հասցէին։

ՄԻՀՐԱՆ ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ
M, Harpootlian, P. O. Box 470,
Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ ղրկողներէն գնահատելի կերպով քաջալերեալ՝ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած զոհողութիւնը չենք զլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս զի ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը։ Հայ ժողովրդեան և մասնաւորապէս մեր տան անձանօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՝ ՑԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 Օսմ. ոսկւոյ անշարժ ստացուածքը իր սոյն փոխ.գրի գործոյն երաշխաւորութիւնն է, յաչս անոնց որոնք կուզեն դրամնին վստահելի միջոցով ղրկել։ Ուստի կը յուսանք թէ հայ հասարակութիւնը չպիտի վարանի իբրև ապահովագոյն միջոց՝ մեր ձեռամբ ղրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակագիր տալ Խարբերդի, Տիգրանակերտի, Ֆղլի, Բալուի, Բերբիի, Մալաթիայի, Սեբաստի, Կ.Պոլսի, նաև Տաճ. բոլոր քաղաքաց համար. (ինձ դրամ ղրկողներն ապահովագրութեան համար՝ նէշէնը Պանքի չէք և կամ մընի օրտըր ղրկելու են)։

Հայրենիքի մէջ ո՛և է գործ տեսնելու կամ գործադրման օգնելու համար՝ պատրաստ եմ եղբօրս Յարութիւն էֆ.ի ձեռամբ կատարել տալ։

Հեռագրով և նամակով դրամ և կամ նաւային թիքէթներ կրնամ ղրկել Մարսիլեայ։

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
Ս. Տամպուրճեան
509 2րդ Ավենիւ. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արևելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և առօրեայ թարմ միս։

Ուստրի պատուական պըլղուրը և ծեծածը փաւընոը 3 սենթ, 25փաւընոյ կամ աւելի գնողներուն համար 2½ սենթի, Հայկական պանիրին փաւընոը 13, իսկ մեծաքանակ գնողին համար 11 սենթի։ Ձիթապտղին փաւընոյ 10 չատ գնողներուն համար 9 սենթի, ձիթապտուղի պատուական իւղին կէլրնը $1.40 ի կը ծախենք։

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին։

ՃԱՇԱՐԱՆ
805 Մէյն փողոց Փաթրսըն

Պատիւ ունինք ծանուցանելու թէ սառուցեալ առնուած ճաշարանը նախանձելի դիրքի մը մէջ դրուելու համար ամէն կարելի միջոց պիտի գործածենք, անանկ որ մեր յաճախորդները գոհ ըլլան. մեր խոհարարին երկար ամեայ փորձառութիւնը ինքնին երաշխաւորութենէ թէ կերակուրները համեղ և մաքուր պիտի ըլլան։ Փորձ մը միայն ձեզ գոհ պիտի ընէ։

Թ. Ա. ԱՆՏՕՆԵԱՆ



Պերլինի համալսարանէն վկայեալ՝ Տքթր. Էֆիլ պատրաստ է ամենադժուարին մասնաւորապէս գազանի կոչուած տխտեր բուժելու։ Կատարելապէս չը բուժուղ հիւանդին դրամը ետ կը տրուի։ Շատ մը հայեր մեծ գոհացում գտեր են իրմէ։ Հայոց համար վճարները շատ չափաւոր են։ Օֆիսը 503 5րդ. Ավենիւ 52րդ. փողոցի անկիւնն է։ Առաւօտեան ժամը 9էն իրիկուան 5ը. իսկ կիրակիները՝ 9էն 12օֆիսը կը գտնուի։ 12—12

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ամէն անոնք, որ կուզեն ազգային հին ու նոր կեանքին և յեղափոխական անցեալ ու ներկայ ուղղութիւններուն տեղեակ ըլլալ, անոնք որ կուզեն հայկական գեղեցկագոյն գրիչներէն արտադրուած հմտալից գրութիւններ և շահեկան երգիծարանութիւններ կարդալ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ կարդալու են։

Տարեկան բաժանորդագինն է 2 ոսկի. վեցամսեայ՝ 1 ոսկի։

Նոր կեանքի Նիւ Եորքի գործակալն է Պրն. Անտոն Թագաւորեան և հասցէն՝

343 Խոթ 34րդ Փողոց։

Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ»ը ձրի կը ղրկուի.

Խմբագրութեան հասցէն է,

L. FRANK
32 CHESTERTON ROAD,
LONDON W ENGLAND.

Մեսրոպ Գազանճեան

231 Խոթ 28 րդ փողոց Նպարավաճառի խանութիս մէջ կը ծախուի ի միջի այլոց իւրաքանչիւր փաւունան չամիշ 5սթ., ոսկի 5, մաքարոնի 5, դեղին թել չէչիրիկ 8, զէյթին 10, օթմիլ 2 սենթի, ոսկան 5 փաւունանոցը 27 և 1 փաւունանոցը 8 սենթի և քէնով ուսմանթէսը 7 սենթի, պատուական ապրանք կը պահեմ, ժան կը ծախեմ, մեծ քանակութիւնով գնողներուն կարեւոր զեղչ կընեմ։

ՊԼՂՈՒՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ

Այս նոր ընկերութիւնը կ'արտադրէ շատ լաւ և ժան պլղուր և ծեծած։

Մեծաքանակ գնողաց համար գինն է 2½ սենթ փաւունը։

Մանրամասն տեղեկութիւն ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին։

NEW YORK
BULGOOR MANIFACTURInG CO.
226 TO 232 Clinton St. Hoboken n. J.

ՃԱՇԱՐԱՆ
ԹԱԹԷՈՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ
ՈՒՍՏՐ 11 Քարլըռ սթ.

Պատիւ ունիմ ծանուցանելու հայրենակիցներու թէ 24 արջ սթ.ի ունեցած ճաշարանս փոխադրած եմ քովի 11 Քարլըռ սթ.ի հոյակապ ու օդաւէտ տան մը մէջ։ ժան և լաւ սենեակներ ունիմ. առատ ու մաքուր կերակուր։ աղքատները ձրի կը կերակրուին։ Ճաշարանիս մէջ պիրայի գործածութիւնը արգիլուած է։

Զաճախորդներս գոհ են ինձմէ։ Զը փորձողները թող փորձեն և տեսնան։

Փէլէրրը կը պատրաստեմ 4—5 տեսակ, և մրգեղէն ալ կը դնեմ. ո՛և է պարագայի տակ հացի և մսի գիներու բարձրացումը չարաթավճարի վրայ տարբերութիւն չի ըներ։

ՃԱՇԱՐԱՆԱՊԵՏ
ԹԱԹԷՈՍ Ս ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
(2 — 2)

Ա Զ Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը տեղափոխուած և աւելի հոսատատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ավենիւ 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը։

ԱԶԴ

Թրոյի մէջ կուզուի լաւ կերակուր պատրաստող խոհարար մը գտնացուցիչ շաբաթականով։ Մանրամասնութեանց համար դիմել՝

Ց. Մ. ՍԻՐԱԿԱՆԵԱՆ
98 Շօրթ Քինկ սթ.
ԹՐՕՑ Ն. Ե.

The Equitable Life Ins. Society of the U. s

«Էքիթէպլ»

Աշխարհի հզօրագոյն և լաւագոյն կենաց ապահովագրական Ընկերութիւնը։

ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրեր կըտայ ի դէպս մահու կամ 15—20—25 տարիէն վճարելի՝ դիթ ուզուի։

Օտար երկիրներէ կամ ներսի նահանգներէն փոխաքաղք կրնան դիւրաթղթակցութեամբ ինքզինքին ապահովագրել տալ։

Հրդեհի դէմ ևս կապահովագրեմ։

(Գործակալ)
ԿՐԱԿԵՏ ՊԻԻՐԻԻՆՃԻԿ
154 E. 27th St. New York



ԴԵՐԶԱԿ
ՑԱԿՈԲ ՈՒԶՈՒՆԵԱՆ
159 Խոթ, 27 րդ փողոց

Թէ պատուական և թէ ժան հանգերձ կը փնտռէք, անանկ չէ՞. — մենք՝ սուղ կը շինենք — բայց չէ՞. մեր գործին որքա՞ն ժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետքը միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց դրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զղջումը չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեզի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան։ Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք։

Ուրիշ տեղերու վրայ հարիւրին քառասուն ժան պատրաստի. հանդերձ ալ կը ծախենք. նաև կը նորոգենք, կը մաքրենք, կը ներկենք և կարդուկենք։

Գիտնալու համար թէ, մենք մեր հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ՝ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեզի այցելելը պիտի բաւէ։

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
ՏԻԳՐԱՆ Ճ. ՄԵԼԲՈՆԵԱՆ
Elite photo Studio
182 Main Street, Paterson, N, J,

Պատիւ ունիմ ծանուցանելու Հայ հասարակութեան թէ յաջողած եմ ճոխ և առաջնակարգ լուսանկարչատուն մը հաստատել Փէթրսընի մէջ ուր կը հրաւիրեմ հայրենակիցներս իրենց լուսանկարները հանել տալու, խիստ չափաւոր գներով։ Երկար տարիներու փորձառութիւն ունիմ արհեստիս բոլոր ճիւղերուն մէջ. պատկեր մեծցունել, ընդօրինակել, շրջանակ շինել և այլն։

Նիւ Եորքէն ու Նիւ Ճրզիէն լկողներուն համբաւ ամսերու գինը ևս կը վճարեմ։

Կը յուսամ թէ շատ հայրենակցներ թէ չափաւոր գնով խիստ գոհացուցիչ լուսանկարներ ունենալու թէ ամառնային զուարճալի ճամբորդութիւն մը ընելու և թէ մեզ քաջալերելու համար պիտի գիմեն մեզ։

Քովս կը ծախուին Հայրիկի, Իզմիրլեանի և Մայր Հայաստանի լուսանկարները։

Մանրամասնութեանց համար գիմել ինձ նամակաւ կամ անձամբ։